Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Օգոստոսի 26-ին, օրվա առաջին կեսին, Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրիի անձնական ինքնաթիռով Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Մեծի Տանն Կիլիկո Արամ Ա Վեհափառը՝ բարի վերադարձի և շուտափույթ ապաքինման իր մաղթանքներն անձամբ հայտնելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Վեհափառ Հորն ուղեկցում էին կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպս. Թրթռյանը, Կիլիկիո Կաթողիկոսության կենտրոնական վարչության ատենապետ, երեսփոխան մեթր Խաչիկ Պապիկյանը, գավազանակիր հոգեշնորհ Տ. Վրույր աբեղա Դեմիրճյանը:

«Զվարթնոց» օդանավակայանում Մեծի Տանն Կիլիկո Հայրապետին դիմավորեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Պերպերյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը, Հայաստանում գտնվող Կիլիկիո Աթոռի միաբաններ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Գերաշնորհ Տ. Սեպուհ եպսկ. Սարգիսյանը, Կիլիկիո Կաթողիկոսության կենտրոնական վարչության անդամ Ոսկեբերան Արզումանյանը, Հայաստանում Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպան Սաադ Զախիան, ՀՀ Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի գլխավորությամբ:

Բարեողջույնի հակիրճ խոսքերից և ողջագուրանքներից հետո, օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի սպասասրահում, դիմելով ներկաներին, Արամ Ա Վեհափառ Հայրապետն ի մասնավորի ասաց.

«Ինձի համար հոգեկան անհուն ուրախություն է անգամ մը ևս ըլալ հայրենիքի հողին վրա: Հայաստանը մեզ համար սովորական երկիր չէ, Հայաստանը մեր հայրենիքն է: Ճիշտ է, որ մենք Սփյուռքի մեջ ենք, Սփյուռքի մեջ ծնած ենք, բայց հայրենիքը մեր մեջ ունեցած ենք, մեր մեջ ունինք, հայրենիքով կապրինք, հայրենիքով կսնանինք, և որպես Սփյուռքի հայություն մենք միշտ պատրաստ ենք մեր ամբողջական մասնակցությունը բերելու հայրենիքի հզորացման նվիրական առաքելությանը:

Այս անգամ եկած եմ Հայաստան անձնապես բարի ապաքինման մաղթանքներս ներկայացնելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ինձի հետ միասին կգտնվին մեր միաբանության ներկայացուցիչը՝ Գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպս. Թրթռյանը և Կենտրոնական վարչության ատենապետ, պետական երեսփոխան մեթր Խաչիկ Պապիկյանը: Մենք եկած ենք հանուն մեր միաբանության, հանուն մեր ժողովականության և հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հոգևոր խնամքին հանձնված

մեր ժողովրդին՝ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին ներկայացնելու մեր լավագույն բարեմաղթությունները քաջառողջության: Վստահ ենք, որ Վեհափառը ապաքինման ընթացքի ավարտին վերանորոգ հավատքով, կամքով և տեսլիքով պիտի շարունակե իր եկեղեցաշեն, ազգանվեր ու հայրենակերտ ծառայությունը»:

Այնուհետև ավտոմեքենաների շարասյունը բարձրաստիճան հյուրերին առաջնորդեց դեպի Մայրավանք, ուր նրանց դիմավորեցին Մայր Աթոռի հոգևորականաց դասը, Գևորգյան Հոգևոր ճեմարանի սաները, մեծաթիվ հավատացյալներ:

Այստեղ Սրամ Ա Վեհափառը «Հրաշափառ»-ի երգեցողությամբ և թափորով մուտք գործեց Մայր Տաճար, խոնահարվեց Իջման Սուրբ Սեղանի առջև, ապա իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Բարձրյալը, հավարտ որի ներկաներին դիմեց սրտի խոսքով՝ առանձնակի շեշտելով.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Գոհություն ու փառք կուտամ Աստուծո, որ անգամ մը ևս ինձի այս գեղեցիկ առիթը և հոգեպարար պահը շնորհեց՝ ըլլալու Միածնաէջ այս Տաճարին մեջ, մեր պապերու սուրբ հավատքով, հոգեմտավոր արժեքներով թրծված Ս. Էջմիածնի մեջ: Այս տաճարը մեզի համար պարզ տաճար մը չէ: Այս տաճարը մեր պատմությունն իսկ է, մեր պատմության կենդանի վկայարանն է, հավերժախոս հուշարարն է մեր մտքի ու հոգիի հսկաներուն, մեր հոգեմտավոր արժեքներուն, մեր փառավոր սրբություններուն, ավանդություններուն: Հետևաբար ըլլալ այս տաճարին մեջ, ըլլալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին մեջ, կնշանակե հոգեպես վերանորոգվիլ, զորանալ մեր քրիստոնեական հավատքին մեջ, զորանալ ու ամրապնդվիլ մեր ազգային պատկանելության մեջ:

Սիրելի միաբան եղբայրներ, ժողովականներ, պետական ներկայացուցիչներ և հավատացյալ ժողովուրդ, ես այս անգամ եկած եմ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ինձի հետ ունենալով մեր միաբանության երեց անդամներեն կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպս. Թրթռյանը, Կենտրոնական վարչության ատենապետ մեր Խաչիկ Պապիկյանը, նույն ժողովին անդամ պարոն Ոսկեբերան Արզումանյանը, մեր միաբանության անդամներեն Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Մեպուհ եպս. Սարգիսյանը, որպեսզի հանուն մեր միաբանության, հանուն մեր Աթոռին ժողովականության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հոգևոր խնամքին հանձնված ժողովուրդին, մեր շուտափույթ ապաքինման բարեմաղթությունները ներկայացնելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Հայրապետին: Նյու Յորք իր ապաքինման շրջանին մենք Անթիլիասեն մնայուն կապի մեջ էինք Վեհափառի հետ: Այսօր մեզի համար մեծ ուրախություն է տեսնել, որ Վեհափառ Հայրապետը ապաքինման դրական ընթացքին մեջ է և մանավանդ վերադարձած է Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Միածնաէջ այս խորանի առջև ես իմ աղոթքս կբարձրացնեմ առ Աստված՝ խնդրելով Աստուծմե, որ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին պարգևե շուտափույթ ապաքինում, քաջառողջ կյանք, որպեսզի ան կարենա վերանորոգ հավատքով, տեսիլքով ու հանձնառությամբ շարունակել իր այնքան նվիրական առաքելությունը ազգաշինության, եկեղեցաշինության, հայրենաշինության սրբազան գործում: Եվ այստեղ

կվստահեցնեմ Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռի միաբանությանը, ժողովականությանը և հայրենի մեր սիրելի ժողովրդին, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը իր միաբանությամբ, ժողովականությամբ, ժողովրդով, իր բոլոր կառույցներով ամբողջականորեն ու անվերապահորեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ է, ամբողջականորեն լծակից իր առաքելության, գործակից ու աջակից իր ծառայության: Սա պահուն ես անգամ մը ևս կվերահաստատեմ մեր Աթոռին հանձնառությունը, իր ամբողջական մասնակցությունը բերելու հայրենակերտումի այնքան նվիրական գործին: Մենք հայրենիքին կպատկանինք, ուր որ ալ գտնվինք: Հայրենիքը մեզի հետ է, ու մենք հայրենիքի հետ պետք է ըլլանք բառին ամբողջական ու վավերական հասկացողությամբ: Հետևաբար կաղոթեմ առ բարձրյալն Աստված, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը շեն ու պայծառ պահե, մեր սիրելի հայրենիքը միշտ անսասան պահե և մեր ժողովրդի բոլոր գավակները հայրենիքին մեջ, թե Սփյուռքում՝ հայրենիքեն դուրս, միասնական հոգիով խմբե նույն և մեկ եկեղեցվո, նույն և մեկ ազգի, նույն և մեկ հայրենիքի սրբազան գաղափարին շուրջ:

Թող Աստված ձեր բոլորը, սիրելի ներկաներ, իր ներկայությամբ, իր օրհնությամբ զորացնե այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»:

Վեհարանում

Մայր Տաճարից Արամ Ա Վեհափառը, թափորի ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի Վեհարան: Մուտքի մոտ Նորին Սրբությանը դիմավորեց Գարեգին Ա Կաթողիկոսը: Ամենայն Հայոց Հայրապետի աշխատասենյակում Կիլիկիո Աթոռի գահակալը նախ բարի վերադարձ, վերջնական ապաքինում մաղթեց Նորին Սուրբ Օծությանը՝ մեկ անգամ ևս շեշտելով մեկ միասնական եկեղեցու կարևորությունը.

«Վեհափառ Տեր, թե՛ օդակայանում իմ խոսքիս մեջ և թե՛ Մայր Տաճարին մեջ հատուկ կերպով շեշտեցի, որ այս անգամ Ս. Էջմիածին՝ Մայր Աթոռ եկած եմ Արտավազդ Սրբազանին հետ՝ որպես միաբանության ներկայացուցիչը, և պարոն Պապիկյանի՝ որպես Կենտրոնական վարչության ատենապետի:

Անձամբ մեր շուտափույթ ապաքինման բարեմաղթությունները ներկայացնելուց հետո, ինչպես գիտեք, Նյու Յորք Ձեր ապաքինման շրջանին ոչ միայն մենք, այլ նաև մեր միաբանությունը, կենտրոնական վարչությունը, մեր ժողովրդի զավակները մոտեն հետաքրքրվեցան Ձեր առողջությամբ. և հազար փառք կուտան Աստուծո, որ ահավասիկ վերադարձած եք Մայր Աթոռ կազդուրված կերպով: Կաղոթենք առ բարձրյալն Աստված, որ Ձեզի շուտափույթ և ամբողջական ապաքինում պարգևե, որպեսզի կարենաք վերանորոգ հավատքով ու նվիրումով շարունակել Ձեր հովվապետական առաքելությունը: Այս առիթով վստահեցնեմ ձեզի, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը և անոր միաբանությունը, կենտրոնական վարչությունը և մենք անձնապես ամբողջությամբ Ձեզի հետ ենք որպես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, ամբողջությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հետ ենք, որպեսզի միասնաբար, ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի ներդաշնակ գործունեությամբ, սերտ գործակցությամբ շարունակենք նույն և մեկ եկեղեցվո՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո առաքելությունը:

Հետևաբար անգամ մը ևս մեր բոլորին անունով ձեզի կներկայացնենք շուտափույթ ապաքինման մեր լավագույն մաղթանքները»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի աշխատասենյակում

«Խորապես ազդված եմ եղբայրական, սիրալիր և օրինակելի վերաբերմունքի համար», այս խոսքերով իր երախտիքն արտահայտեց Ամենայն Հայոց Վեհափառը՝ Արամ Ա Հայրապետի ներկայությունը դիտելով իբրև Հայ Առաքելական եկեղեցու միաբանության լավագույն դրսևորում: Շարունակելով միտքը՝ Գարեգին Ա Կաթողիկոսը նաև հիշեցրեց, որ սիրո հրաշագործ էությունից են ծնվում ամեն լավն ու կատարյալը, որ մարդ արարածը ժառանգել է Տիրոջից: Իսկ սեփական հոտի անմնացորդ հովվության համար արդեն կարևորվում են համերաշխությունը, սրտացավությունը, հարազատությունը:

Մեկ ժողովուրդը երկու տարբեր հոտ համարվել չի կարող: Այն մեկ եղել է, է և լինելու է, ինչպիսի պայմաններ էլ թելադրի նրան պատմությունը: «Մենք վարձու հովիվներ չենք և առողջ բանականությամբ, առողջ հոգով ու առողջ մարմնով պիտի առաջնորդենք մեր հավատավոր հոտին», - շարունակեց իր խոսքը Ամենայն Հայոց Հայրապետը և ապա ավելացրեց.

«Սիրելի Արամ Վեհափառ, սիրելի հոգևոր եղբայրս, սիրելի խաչիկ, մեծապես ազդված եմ ձեր այս եղբայրական, սիրալիր և օրինակելի վերաբերմունքի համար: Երբ Նյու Յորքի մեջ կգտնվեի, հաճախակի ձեր հեռախոսներով մոտեն հետաքրքրվեցաք և ձեր կենդանի շահագրգռությունը ցույց տվիք հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, անոր միաբանության և հավատացյալ ժողովրդին մաղթանքները, աղոթքները փոխանցեցիք, և այդ բոլորը ինձի համար մասնավոր նշանակություն ունեցան և բարոյական ուժականություն տվին: Մեր ժողովրդեն բազմաթիվ-բազմաթիվ ուրիշ վայրերեն եկած հեռագիրները, հեռախոսները, այցելությունները, պատգամները ես համարում եմ մեր ժողովրդի եկեղեցվո հանդեպ ունեցած սիրո արտահայտություն և ադոր համար շնորհակալ եմ բոլոր եղածներուն համար: Այսօր, երբ անձնապես կուգաք մեկ օրվան համար և ձեր այդ բոլոր մաղթանքները ձեր այցելության մեջեն խորհրդանշանականորեն շոշափելի կերպով կարտահայտեք, ադիկա մեզի համար քաղցր զգացում մը կառաջացնե, և որուն համար բարձրորեն կգնահատենք ձեր այս առաքելությունը և կուզենք, որ մեր եպիսկոպոսաց դասուն հետ միասին, Մայր Աթոռի միաբանության հետ միասին տեսնել Հայոց Եկեղեցին միշտ այսպես միասնական, միշտ համախոհ եւ գործով, եւ մտքով: Մենք չենք երկու Եկեղեցի, և այդ գաղափարը կտարածենք մեր ժողովրդին մեջ: Մեկ Եկեղեցի ենք և մեր մեկությունը ամբողջականորեն կարտահայտվի, և այսօր այդ արտահայտության գեղեցիկ երևույթներեն մեկն է ձեր այցելությունը:

Ես կուզեի այս առիթով իմ մաղթանքները ներկայացնել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը՝ առաքելության, գործունեության, զարգացման և մեր ժողովրդի ծառայության համար, որովհետև այդ Աթոռը ինձի համար իմ հոգևորական կյանքիս ամենեն կարևոր, ամենեն ընդարձակ ժամանակը գրաված Աթոռն է: Մենք գիտենք, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո ամբողջության մեջ այս Աթոռը ունի կարևոր կատարելիք դեր, և ես իմ ողջ հոգով կմաղթեմ, որ Աստված ձեզի տա կատարյալ, տևական, մշտանորոգ առողջություն և նաև միաբանության ու վանական վարչության անդամներուն թե՛ աշխարհիկ, թե՛ եկեղեցական մարմիններուն և հավատացյալ ժողովրդին»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին շուտափույթ ապաքինում և արևշատություն մաղթեց նաև Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպան տիար Սաադ Զախիան:

Նույն օրը, երեկոյան, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետը վերադարձավ Անթիլիաս՝ լիբանանահայությանը տանելով Ամենայն Հայոց Հորողջույնները, հայրական օրհնանքն ու լավագույն բարեմաղթանքները:

ՄԱՐԻԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ